



Երևանի Կոմիտասի անվան
Պետական Կոնսերվատորիա

Yerevan Komitas
State Conservatory

Ереванская Государственная
Консерватория им.Комитаса

ԵՐԱԺԻՇ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (204)

12 դեկտեմբեր 2022

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՆՎԻՐՈՒՄ ԿՈՆՍԱԿՆՏԻՆ ՍԱՐԳՃԵՎԻ
ԾՆՆԴՅԱՆ 145-ԱՄՅԱԿԻՆ

ՀՕՖ-ի կազմակերպած բուհական
մրցույթ ԵՊԿ-ում



Կոնստանտին Սարգսյանի ծննդյան 145-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակիցներ



3

Ալեքսանդր Սպենդիարյանի ռուս-թանգարանի 55-ամյակը



Րուս-թանգարանի հոբելյանին նվիրված միջոցառման մասնակիցները

4



«Արվեստի
Ճակատում»
նախագծի
մեկնարկը

6



Մրցույթի մասնակիցները և կազմակերպիչները

2

ВЕХИ НАЦИОНАЛЬНОЙ КУЛЬТУРЫ



Николай Мадоян и оркестр Национального академического театра оперы и балета имени А. Спендиарова под руководством Карена Дургаряна

7

Երգիչ-խմբավար Գեորգ Հաճեանի անվան
կրթամրցանակակիրները



Լուիզա Պետրոսյան, Թովմաս Կարապետյան, Թաթուլ Հաճեան, Ֆրիդա Հաճեան, Գայանե Գեղամյան, Արմինե Պետրոսյան, Դավիթ Խաչատրյան

8

ՀՕՖ-ի կապակերպած բուհական մրցույթ ԵՊԿ-ում

Դեկտեմբերի 14-ից 16-ը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում «Հայ Օգնության Ֆոնդ»-ի աջակցությամբ առաջին անգամ անցկացվեց բուհական մրցույթ: Նշենք, որ բարեգործական հիմնադրամի համագործակցությունը երաժշտական բուհի հետ ունի շուրջ 20 տարվա պատմություն: Այդ ընթացքում ֆինանսավորում են

[ալտ], ղեկ.՝ Ա. Թորոսյան), Սյուզանա Ասատրյանը (բակալավրական, 2-րդ կուրս [ջութակ], ղեկ.՝ Ա. Մկրտչյան) և Ժան Միշել Արոյանը (բակալավրական, 3-րդ կուրս [ջութակ], ղեկ.՝ Բ. Վարդանյան), իսկ 1-ին մրցանակի ի վանե Եսայանը (բակալավրական, 1-ին կուրս [ջութակ], ղեկ.՝ Ա. Ասատրյան) և Էմիլ Կապինոսը (բակալավրական, 3-րդ կուրս [թավջութակ], ղեկ.՝ Ա. Թալալյան):

լի լուրով. «Ինչպես գիտեք, ՀՕՖ-ի կողմից Կոնսերվատորիային աջակցության ծրագիրն այս տարի պետք է ավարտվեր: Երբ այս մրցույթի ընթացքի մասին տեղեկություն և լուսանկարներ ուղարկեցինք ՀՕՖ-ի Նյու-Յորքի գրասենյակ, հաջորդ օրն անակնկալ լուր ստացանք: Ուզում եմ սիրով տեղեկացնել ձեզ, որ այս ծրագիրը ՀՕՖ-ի աջակցությամբ կշարունակվի ևս 4 տարի: Ընորհավորում եմ բոլորիս և մաղթում հաջողություն մեր համատեղ ծրագրերին»:

Մրցույթից ստացած տպավորություններն ամփոփելու համար գրուցեցինք ԵՊԿ ուսումնական գծով պրոռեկտոր Արամ Հովհաննիսյանի հետ. «Նվագախմբային ֆակուլտետի բուհական մրցույթը հնարավորություն ստեղծեց ուսանողների համար ևս մեկ անգամ մրցութային ձևաչափով հանդես գալու: Բացի այդ, սա նաև շատ կարևոր իրադարձություն էր բուհի մշակութային կյանքի համար, քանի որ կոնսերվատորիան կրթական հաստատություն լինելուց բացի նաև մշակութային կառույց է, և մենք պետք է ձգտենք ուսանողներին առավելագույնս հնարավորություն տալ դեռ ուսման տարիներին իրենց զգալ որպես արտիստներ: Անձամբ ես շատ գոհ եմ մրցույթի կատարողական մակարդակից: Պետք է նաև հատուկ շնորհակալություն հայտնել դասախոսներին, ովքեր փաստացի դեռ առաջին կիսամյակը չբոլորած՝ հիացալի պատրաստել էին ուսանողներին, և նրանք էլ շատ մեծ պատասխանատվությամբ ներկայացան մրցույթին: Ընորհավորում եմ բոլոր մասնակիցներին»:

Իբրև նկատառում Ա. Հովհաննիսյանն առանձնացրեց դասիլիճի սակավամարդ լինելու հանգամանքը. «Հանդիսատեսի ներկայությունը նաև խթան է հետագա աշխատանքի համար և վերջապես դա հարգանք և զմահատանք է իրենց սերնդակից կոլեգաների հանդեպ: Մեր ուսանողների կողմից դրսևորվեց որոշակի պասսիվություն, և այս ուղղությամբ պետք է աշխատանք տարվի:

Իհարկե, կան նաև որոշ ցանկություններ ներկայացվող ծրագրի հարցում. իմ կարծիքով, ակադեմիական բուհում պետք է գերակշռի ակադեմիական բոլոր ժամանակաշրջանների կամ ժանրային ուղղվածությունների երաժշտությունը, թեև դա նույնպես ճաշակի և մոտեցման հարց է, և ակտերնատիվ ստեղծագործությունները երբեմն նույնպես կարող են հնչել շատ համոզիչ»:

Մրցույթի կազմակերպիչ, ԵՊԿ Նվագախմբային ֆակուլտետի ղեկան Ռուբեն Սմբատյանը կարևորեց ՀՕՖ-ի նյութական լուրջ աջակցությունը, ինչը հնարավորություն տվեց ունենալ մրցանակային ֆոնդ և պատշաճ կերպով իրականացնել աշխատանքները. «Այս անգամ մրցույթը նախատեսված էր լարային դասական գործիքների և փայտյա փողայինների համար: Հուսանք, որ հետագայում կկարողանանք նաև պղնձյա փողայիններին ներգրավել: Ընդհանուր առմամբ ես շատ գոհ եմ, որովհետև բոլոր մասնակիցներն էլ պատշաճ պատրաստված էին, մեկը մի փոքր ավելի շատ, մյուսն՝ ավելի պակաս, բայց կարծում եմ, որ անցավ շատ հետաքրքիր: Ամենակարևոր ցանկությունն այն է, որ ուսանողները չխուսափեն մասնակցել նմանատիպ ներբուհական մրցույթների, քանի որ այս ձևաչափով առավել վառ դասընկերների ելույթները տեսնելով՝ մյուսները նոր մոտիվացիա են ստանում և կատարելագործման ձգտում ունենում»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲՈՐՅԱՆ
Երաժշտագետ



Ռուբեն Սմբատյան, Գևորգ Ավետիսյան, Արամ Հովհաննիսյան



Ռուբեն Սմբատյան, Արմեն Թորոսյան, Մարտունի Կոստանդյան

ստացել բազմազան կրթական նախագծեր և իրականացվել են 4 հանրապետական և միջազգային մրցույթներ: Այս անգամ մրցույթն ուներ ներբուհական ձևաչափ և նախատեսված էր նվագախմբային ֆակուլտետի սաների համար: Մրցույթին մասնակցեցին երաժշտական բուհի բակալավրականի և մագիստրոսականի 18 ուսանող: Մրցույթի պարտադիր ծրագիրը ներառում էր վիրտուոզ պիես և խոշոր կտավի ստեղծագործություն՝ կոնցերտի 1-ին կամ 2-րդ, 3-րդ մասեր: Մասնակիցները ներկայացան բազմազան և ինքնատիպ նվագացանկով՝ կատարելով թե՛ դասական, թե՛ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Դեկտեմբերի 13-ին անցկացվեց վիճակահանություն, որի արդյունքում որոշվեց մասնակիցների հերթականությունը:



Էդուարդ Կարապետյան



Էմիլ Կապինոս



Իվան Եսայան



Էդուարդ Խորոզյան

Դեկտեմբերի 14-ին ելույթ ունեցան Լարային գործիքների ամբիոնի ուսանողները: Հանձնախմբի անդամներն էին Նվագախմբային ֆակուլտետի ղեկան, դոցենտ Ռուբեն Սմբատյանը, Լարային գործիքների ամբիոնի դասախոս Արմեն Թորոսյանը և Երևանի Պ. Չայկովսկու անվ. միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցի տնօրեն, ԵՊԿ դոցենտ Մարտունի Կոստանդյանը: Նարե Մելքոնյանը (բակալավրական, 2-րդ կուրս [տավիղ], ղեկ.՝ Ջ. Հարությունյան), Անուշ Մարգարյանը (բակալավրական, 4-րդ կուրս [ջութակ], ղեկ.՝ պրոֆ. Բ. Վարդանյան) և Սվետլանա Միքայելյանը (բակալավրական, 2-րդ կուրս [ջութակ], ղեկ.՝ պրոֆ. Ա. Կոսենյան) ստացան դիպլոմներ, իսկ մրցանակային տեղերը կիսվեցին. 3-րդ մրցանակի արժանացան Արման Պողոսյանը (բակալավրական, 3-րդ կուրս [թավջութակ], ղեկ.՝ դոց. Ա. Թալալյան) և Էլեն Մամիկոնյանը (բակալավրական, 3-րդ կուրս [ջութակ], ղեկ.՝ պրոֆ. Ա. Մկրտչյան), 2-րդ մրցանակի՝ Սոնա Թուրաբյանը (մագիստրատուրական, 2-րդ կուրս

[կլառնետ], ղեկ.՝ դոց. Յ. Սարգսյան), 2-րդ մրցանակը՝ Մանե Ավագյանը (բակալավրական, 1-ին կուրս [ֆլեյտա], ղեկ.՝ Գ. Ավետիսյան) և Ավագ Ավագյանը (մագիստրոսական, 1-ին կուրս [կլառնետ], ղեկ.՝ պրոֆ. Վ. Մանուչարյան): 1-ին մրցանակի արժանացավ Էդուարդ Խորոզյանը (բակալավրական, 1-ին կուրս [կլառնետ], ղեկ.՝ Յ. Սարգսյան):

Դեկտեմբերի 16-ին անցկացվեց մրցանակաբաշխության արարողությունը, որի ընթացքում ելույթ ունեցան Լարային և փողային բաժինների 1-ին մրցանակակիր ուսանողները:

ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի փոխտնօրեն, գիտական և կրթական ծրագրերի ղեկավար Էդուարդ Կարապետյանը ջերմ շնորհավորանքներ հղեց մրցույթի կազմակերպիչներին, մասնակիցներին և մրցանակակիրներին, ինչպես նաև հատուկ երախտիքի խոսք հայտնեց ԵՊԿ դասախոսներին և ռեկտոր, պրոֆեսոր տիկին Հովհաննիսյանին: Ողջույնի խոսքի ավարտին էլ կիսվեց անսպասելի ուրախա-

ցույթը նախատեսված էր լարային դասական գործիքների և փայտյա փողայինների համար: Հուսանք, որ հետագայում կկարողանանք նաև պղնձյա փողայիններին ներգրավել: Ընդհանուր առմամբ ես շատ գոհ եմ, որովհետև բոլոր մասնակիցներն էլ պատշաճ պատրաստված էին, մեկը մի փոքր ավելի շատ, մյուսն՝ ավելի պակաս, բայց կարծում եմ, որ անցավ շատ հետաքրքիր: Ամենակարևոր ցանկությունն այն է, որ ուսանողները չխուսափեն մասնակցել նմանատիպ ներբուհական մրցույթների, քանի որ այս ձևաչափով առավել վառ դասընկերների ելույթները տեսնելով՝ մյուսները նոր մոտիվացիա են ստանում և կատարելագործման ձգտում ունենում»:

«Նվիրյալ հայորդի» մրցանակ

Հայ մշակույթում ներդրած ավանդի համար AAD.am կայքը կոնսերվատորիայի վաստակաշատ երեք դասախոսի՝ Ջագ-փոփ երաժշտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր **Նարինե Զարիֆյանին**, նույն ամբիոնի պրոֆեսոր **Մարտին Վարդապետյանին** և Կոմպոզիցիայի ամբիոնի պրոֆեսոր **Արամ Սաթյանին** արժանաց-



րել է «Նվիրյալ հայորդի» մրցանակին:

AAD.am-ը հիմնադրվել է 2009-ին և անցած տարիների ընթացքում կայքի միջնորդությամբ և աջակցությամբ կազմակերպվել են սոցիալական, ռազմա-հայրենասիրական, առողջապա-



հական, կրթական և այլ բնույթի միջոցառումներ, որոնց նպատեղ են հազարավոր մարդկանց խնդիրների լուծմանը:



ՆԿԻՐՈՒՄ ԿՈՆՍԱԿՆՏԻՆ ՍԱՐԱՋԵԿԻ ԾՆՆԴՅԱՆ 145-ԱՄՅԱԿԻՆ

Այս տարի լրացավ մեծանուն դիրիժոր, մանկավարժ, ջութակահար, հայկական երաժշտական մշակութի մեծ երախտավոր Կոնստանտին Սարաջևի (Սարաջյան) ծննդյան 145-ամյակը:

Արդեն լինելով կայացած և ճանաչված դիրիժոր և մանկավարժ, 1935-ին տեղափոխվում է Երևան, ծավալելով այստեղ բուռն պրոֆեսիոնալ և հասարակական գործունեություն: 1935-1939 թվականներին նա ստանձնում է Հայկական օպերայի և բալետի թատրոնի ղեկավարի և գլխավոր դիրիժորի պաշտոնը, ինչպես նաև հանդիսանում է Հայկական ֆիլիարմոնիայի կազմակերպիչը և գեղարվեստական ղեկավարը: Նրա կյանքը սերտ կապված է նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հետ՝ 1936-ից նա հանդիսանում է ԵՊԿ պրոֆեսոր, իսկ 1940-ից՝ ռեկտոր: Այսօր նրա անունն է կրում կոնսերվատորիայի գրադարանն ու Ուսանողական սիմֆոնիկ նվագախումբը:

Սույն թվականի նոյեմբերի 3-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Ակուսիկ լաբորատորիայում տեղի ունեցավ «Սարաջևյան ընթերցումներ» խորագրով գիտաժողովը և «Կոնստանտին Սարաջև-145» ժամանակավոր ցուցադրությունը նվիրված Կոնստանտին Սարաջևի ծննդյան 145-ամյա հոբելյանին: Ցուցահանդեսին ներկայացվեցին կարևոր արխիվային լուսանկարներ, փաստաթղթեր և այլն: Միջոցառումները իրականացրեցին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանը՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

Իսկ վերջերս՝ նոյեմբերի 30-ին, կայացավ ԵՊԿ Ուսանողական գիտական ստեղծագործական ընկերության հերթական աշնանային գիտաժողովը, որը նույնպես նվիրված էր Սարաջևի հոբելյանին:

Գիտաժողովին, ընդունված ավանդույթի համաձայն, բացի ԵՊԿ ուսանողներից մասնակցեցին նաև խաչատուր Արթուրյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի, Երևանի պետական Առնո Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական, Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջների ներկայացուցիչները:

Ողջույնի խոսքում արվեստագիտության թեկնածու, դո-



Շովինար Մովսիսյան

ցենտ, ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր Շովինար Մովսիսյանը հատուկ ընդգծեց Կոնստանտին Սարաջևի բացառիկ դերը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ու հայկական երաժշտական արվեստի կյանքում: Դրա հետ մեկտեղ պրոռեկտորը զուգահեռներ անցկացրեց այսօրվա ու նախորդ դարի աշխարհաքաղաքական իրավիճակի. լուծումը մեկն է՝ անդադար աշխատել, ստեղծագործել և շարունակել մեծերի գործը:

Նշանակալի էր, որ գիտաժողովի ընթացքում ԵՊԿ պրո-



Արմեն Բուդաղյան

ֆեսոր, արվեստագիտության թեկնածու Արմեն Բուդաղյանը կոնսերվատորիային նվիրեց Կոնստանտին Սարաջևի ռեկտորության տարւուն՝ 1943 թվականի ՈՒԳԱՐ առաջին գիտաժողովի ծրագիրը:

Երևանյան կոնսերվատորիայից աշխատանքները ներ-



Գիտաժողովի մասնակից ուսանողները

կայացրեցին Երաժշտության պատմության ամբիոնի դոցենտներ՝ Լուսինե Սահակյանի, Նարինե Ավետիսյանի, Աննա Խաչատրյանի, Հայ Երաժշտական ֆուլկլորագիտության ամբիոնի դոցենտներ՝ Անահիտ Բաղդասարյանի, Նունե Աթանասյանի, Մարիաննա Տիգրանյանի մասնագիտական դասարանների երաժշտագետները:

Ամփոփիչ խոսքում երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Ալինա Փախկանյանը ուշադրություն գրավեց գիտաժողովին ներկայացրած թեմաների լայնությանն ու բազմազանությանը: Ձեկուցումներում հեղինակներն անդրադարձան ժամանակակից երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությանը (Վահրամ Սարգսյան, Ալեքսանդր Իրադյան), իրենց բնագավառում հիշատակությանն արժանի գործիչներին (տեսաբան, վաստակաշատ մանկավարժ Ռիտա Պետրոսյան, միկրոքանդակագործ Էդվարդ Տեր-Ղազարյան), կոմպոզիտորների առանձին ստեղծագործությունների վերլուծությանը (Ստեփան Ռոստոմյան, Դավիթ Հալաջյան, Բենջամին Բրիտեն, Սոֆա Ազնաուրյան, Էդվարդ Հայրապետյան, Ստեփան Էլմաս, Առնո Բաբաջանյան, Էդուարդ Բաղդասարյան, Լյուդվիգ վան Բեթհովեն, Կոմիտաս), ժամանակակից կատարողական արվեստին (քանոնի դպրոցի ներկայացուցիչներ՝ Ծովինար Յովհաննիսյան և Լաուրա Մելիքյան): Ընթերցվեցին նաև երաժշտատեսական, ֆուլկլորագիտական և մեթոդական ուղղվածության աշխատանքներ (ռիթմական զգացողություն և երգեցողություն, մեմորիալ ժանրը հայ կոմպոզիտորական արվեստում, հայ արդի ծայնագրությունը, բանահավաքական աշխատանքներ):

Գիտաժողովի ավարտին Ծովինար Մովսիսյանն իր երախտագիտությունը հայտնեց ԵՊԿ դասախոսներին ոչ սովորական պայմաններում (ԵՊԿ շենքի կապիտալ վերանորոգման) անձնվեր աշխատանքի՝ ուսանողներին պատշաճ մակարդակով ներկայացնելու համար: ԵՊԿ գիտական գծով պրոռեկտորի հավաստմամբ գիտաժողովի լավագույն զեկույցները տեղ կգտնեն ԵՊԿ «Երաժիշտ» ամսաթերթում:

Գիտաժողովում ընդգրկված աշխատանքները.

Երևանի պետական Առնո Բաբաջանյանի անվ. երաժշտամանակավարժական քոլեջ

Սամվել Սիրունյան, 3-րդ կուրս, երաժշտության տեսության բաժին, ղեկավար՝ դասախոս **Արմենուհի Բաբոյան** «Վահրամ Սարգսյան: Ստեղծագործական դիմանկար»

Մանե Սվազյան, 3-րդ կուրս, երաժշտության տեսության բաժին, ղեկավար՝ դասախոս **Արմենուհի Բաբոյան** «Ալեքսանդր Իրադյանի ստեղծագործության շուրջ»

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվ. պետական երաժշտական քոլեջ

Մարինե Յովհաննիսյան, 4-րդ կուրս, երաժշտության տեսության բաժին, ղեկավար՝ դասախոս **Անահիտ Ներսիսյան** «Իր գործի մեծ նվիրյալը: Ռիտա Պետրոսյան»

Թագուհի Ավագյան, 3-րդ կուրս, ժող. երգեցողության բաժին, ղեկավար՝ դասախոս **Արմինե Հայրապետյան** «Հրաշագործը: Էդվարդ Տեր-Ղազարյան»

Խ. Արթուրյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան

Լալա Սիմոնյան, մագիստրոսականի 2-րդ կուրս, երաժշտական կրթության բաժին, ղեկավար՝ դոցենտ **Մարգարիտա Բաղդասարյան**

«Սոֆա Ազնաուրյանի՝ երեսնամյա համար «Զի կարելի է արկածները» օպերայի երաժշտադաստիարակական նշանակությունը»

Շուշաննա Գրիգորյան, մագիստրոսականի 2-րդ կուրս, երաժշտական կրթության բաժին, ղեկավար՝ արվ. թեկնածու, դոցենտ **Աննա Հարությունյան** «Երգեցողությունը, որպես ռիթմական զգացողության զարգացման միջոց»

Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի

Գյումրու մասնաճյուղ

Վիկտորյա Ներսիսյան, բակալավրականի 2-րդ կուրս, երաժշտագիտության բաժին (հեռակա), ղեկավար՝ դասախոս **Աննա Կուզմինա** «Բ. Բրիտենի «Պայծառացումներ» վոկալ շարը»

Չեղինե Խաչատրյան, բակալավրականի 2-րդ կուրս, երաժշտագիտության բաժին, ղեկավար՝ դոցենտ **Ռիտա Աղայան** «Ստեփան Ռոստոմյանի «Թանկա» վոկալ շարը»

Սոֆյա Խաչատրյան, բակալավրականի 3-րդ կուրս, երաժշտագիտության բաժին, ղեկավար՝ դոցենտ **Ռիտա Աղայան** «Դավիթ Հալաջյան: Դիմանկարի ուրվագիծ»

Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիա

Լիլիթ Խաչատրյան, բակալավրականի 3-րդ կուրս, երաժշտագիտության բաժին, ղեկավար՝ արվ. թեկնածու, դոցենտ **Աննա Խաչատրյան** «Էդվարդ Հայրապետյանի «Մտերմիկ տեսիլներ» խմբերգը կանանց կազմի համար»

Տաթև Բաղդյան, բակալավրականի 3-րդ կուրս, երաժշտագիտության բաժին, ղեկավար՝ արվ. թեկնածու, դոցենտ **Աննա Խաչատրյան** «Հայկական թեմատիկան Ստեփան Էլմասի արվեստում (Դաշնամուրային երեք պիեսի օրինակով)»

Լիանա Պողոսյան, բակալավրականի 3-րդ կուրս, երաժշտագիտության բաժին, ղեկավար՝ արվ. թեկնածու, դոցենտ **Լուսինե Սահակյան** «Առնո Բաբաջանյանի Առաջին կվարտետը»

Թամարա Մուրադյան, բակալավրականի 3-րդ կուրս, երաժշտագիտության բաժին, ղեկավար՝ արվ. թեկնածու, դոցենտ **Լուսինե Սահակյան** «Էդուարդ Բաղդասարյանի կամերային-գործիքային ստեղծագործությունները (Դաշնամուրային կվինտետի օրինակով)»

Էրիկ Աղյան, բակալավրականի 3-րդ կուրս, ժող. գործիքների բաժին, ղեկավար՝ արվ. թեկնածու, դոցենտ **Անահիտ Բաղդասարյան** «Մեկ վարկած հայ արդի ծայնագրության վերաբերյալ»

Անահիտ Հարությունյան, բակալավրականի 3-րդ կուրս, ժող. գործիքների բաժին, ղեկավար՝ արվ. թեկնածու, դոցենտ **Անահիտ Բաղդասարյան** «Ծովինար Յովհաննիսյանի կատարողական դպրոցը»

Չեղինե Սարգսյան, բակալավրականի 4-րդ կուրս, երաժշտագիտության բաժին, ղեկավար՝ արվ. թեկնածու, դոցենտ **Նունե Աթանասյան** «Հայ քանոնի կատարողական արվեստի երախտավորներ: Լաուրա Մելիքյան»

Միլենա Ջալյան, բակալավրականի 4-րդ կուրս, երաժշտագիտության բաժին, ղեկավար՝ արվ. թեկնածու, դոցենտ **Լուսինե Սահակյան** «Լյուդվիգ վան Բեթհովենի դաշնամուրային վարիացիաները՝ Պավել Վրանիցկու ռուսական թեմայով»

Լինդա Սարգսյան, բակալավրականի 4-րդ կուրս, երաժշտագիտության բաժին, ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվ. թեկնածու **Մարիաննա Տիգրանյան** «Բանահավաքական աշխատանքները Գորիսում»

Մարիամ Վարդանյան, մագիստրոսականի 1-ին կուրս, երաժշտագիտության բաժին, ղեկավար՝ արվ. թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյան «Որոշ դիտարկումներ Կոմիտասի «Առ գետս Բաբելացույ» սաղմոսի շուրջ»

Անժելիկա Հակոբյան, մագիստրոսականի 2-րդ կուրս, երաժշտագիտության բաժին, ղեկավար՝ արվ. թեկնածու, դոցենտ **Նարինե Ավետիսյան** «Մեմորիալ ժանրը հայ երաժշտարվեստում»

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Երաժշտագետ, «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր

Վահրամ Սարգսյանի ստեղծագործական դիմանկար

Սույն հոդվածը ընթերցվել է ԵՊԿ ՈԻԳՍԸ Կոմս-տանտին Սարաջևի ծննդյան 145-ամյակին նվիրված գիտաժողովի շրջանակներում 2022-ի նոյեմբերի 30-ին ԵՊԿ Ակուստիկ լաբորատորիայում:
Ղեկավար՝ դասախոս Արմենուհի Բաբլոյան

Վահրամ Սարգսյանը հանդիսանում է ժամանակակից ակադեմիական երաժշտության այն գործիչներից մեկը, ով իր գնահատելի ներդրումն ունի հայկական երաժշտության զարգացման և առավել ևս հայկական ազգային ինտոնացիան, ռիթմիկան և հնչողությունն աշխարհին ի ցույց դնելու մեջ: Վահրամ Սարգսյանը դեռ վաղ հասակից ունեցել է մեծ սեր դեպի երաժշտությունը և դա ինչ որ առումով պայմանավորված է իրենց տանը տիրող երաժշտական մթնոլորտով: Հայրը եղել է երգիչ, իսկ պապը՝ ջութակահար: 10 տարեկանում նա սկսում է երգել հայ առաքելական եկեղեցու երգչախմբում, որը մեծ հետք թողեց հետագա գործունեության վրա:

Կոմպոզիտորի ստեղծագործական ուղին սկսել է Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում՝ Արամ Սաթյանի դասարանում և ապա շարունակելով դասերը՝ Սուրեն Ջաքարյանի, Վարդան Աճենյանի, Միքայել Կոկժակի հետ, 1998-ին ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիա, ուսանել պրոֆեսոր Աշոտ Ջոհրաբյանի ստեղծագործական դասարանում: 2000-2006 թվականները տվորել է կոնսերվատորիայի խմբավարական բաժնում՝ պրոֆեսոր Տիգրան Հեքեքյանի դասարանում, իսկ 2007-ին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիայի ասպիրանտուրան:

Սկսած 2000-ից Վահրամ Սարգսյանի ստեղծագործությունները բազմիցս կատարվել են Կանադայում, Լեհաստանում, Մեծ Բրիտանիայում, Հունաստանում, Գերմանիայում, Ավստրիայում, ԱՄՆ-ում, Բելոռուսում, Իտալիայում, Բելգիայում, Ճապոնիայում, Ռուսաստանում, Շվեդիայում և այլուր: Կոմպոզիտորի ստեղծագործությունների կատարողների թվում են "BBC Singers" և "Boston Chamber Ensemble" երգչախմբերը, Հայաստանի պետական կամերային և Երևանի Կամերային երգչախմբերը, Գերմանական MPAW վոկալ անսամբլը, «Ալան Հովհաննես» լարային նվագախումբը, «Հայաստանի Փոքրիկ Երգիչներ», «Սպեղանի» ինչպես նաև «Գեղարդ» երգեցիկ երգչախումբը և այլք:

Կոմպոզիտորը մի շարք միջազգային մրցույթների մրցանակակիր է: 2008-ին արժանացել է մրցանակի Իտալիայի Աոստա քաղաքում տեղի ունեցած երգչախմբային ստեղծագործությունների մրցույթում: 2009-ին Համաշխարհային Հայկական Կոնգրեսը Վահրամ Սարգսյանին շնորհել է մրցանակ երաժշտարվեստի ոլորտում ունեցած նվաճումների համար, իսկ Խորվաթիայում կայացած երգչախմբային ստեղծագործությունների մրցույթում ստացել է առաջին մրցանակ: 2010-ին Բուստում կայացած 3rd BCE Commission միջազգային մրցույթում, որտեղ մասնակցել է ավելի քան 100 կոմպոզիտոր, նա հաղթող է ճանաչվել, իսկ 2012-ին արժանացել Socan Հիմնադրանքի Godfrey Ridout մրցանակին:

Վահրամ Սարգսյանը ստեղծագործում է գլխավորապես կամերային-գործիքային և վոկալ-խմբերգային ժանրերում: Կոմպոզիտորի ստեղծագործական գործունեությունը դեռևս պայմանականորեն կարելի է բաժանել 2 ժանանակաշրջանների՝ ուսանողական՝ 1997-ից 2007 թվական, և 2012-ից սկսվում է ստեղծագործական որոնումների մոր շրջանը:



Վահրամ Սարգսյան

ժումներ: Փոխարենը երկերն ունեն ընդլայնված տոնայնություն, որի սահմանները չեն անցնում ատոմալ երաժշտության դաշտ: Այդ շրջանի ստեղծագործության օրինակ է «Լույս Ջվարթ»-ը: Հատկանշական է այն փաստը, որ Վահրամ Սարգսյանի բոլոր շրջաններում ստեղծված վոկալ երկերում մեծ ազդեցություն ունի հայ հոգևոր երաժշտությունը: Դեռ 10 տարեկանից, երգելով եկեղեցում, ականա ձևավորվում է նրա հոգևոր երաժշտական մտածողությունը և ուղեկցում կոմպոզիտորին ստեղծագործական որոնումների ստեղծագործական բոլոր փուլերում: Դրանով է պայմանավորված կոմպոզիտորական արվեստում վոկալ ժանրերի գերակշռությունը: Իսկ եթե դիտարկենք ուսանողական վաղ շրջանի գործիքային երաժշտությունը, ապա այնտեղ առկա մոդալ մտածողության կողքին կնկատենք ատոմալ էպիգոններ: Երաժշտական գործիքների հնարավորությունները թույլ են տալիս լայնորեն օգտագործել ոչ տեմպերացված հնչյուններ: Դրանց շնորհիվ գոյացող միկրոտոնալ տարրերը տվյալ ստեղծագործությանը հաղորդում են յուրօրինակ ազգային երանգ: Այդպիսի մտադրացման վառ օրինակներից են՝ կոմպոզիտորի 1998-ին թավջութակի և դաշնամուրի համար գրված «Պոեմ»-ը և կվարտետը՝ գրված 2000-ին:

2012-2015 թվականները գրված գործիքային ստեղծագործություններում գործիքներին տրված մոր մեկնաբանության հիմքը կազմում է կլաստերային հնչողությունը, որն առաջ է բերում կատարողական, տեխնիկական մոր հնարավորություններ, ենթադրվում գործիքային ազատ համադրությունների: Դրա վառ օրինակ է «Hunting the Hunter» կամ «Որսավոր Որսորդը» գործը կլառնետի, մարիմբայի, դաշնամուրի, 2 ջութակի, ալտի, թավջութակի և կոնտրաբասի համար:

2012-ից գրված վոկալ ստեղծագործություններում, հետաքրքրությունը դեպի ծայրի ընդլայնված հնարավորությունները ձեռք են բերում հիմնաբարային նշանակություն: 2015-ին ուսումնական ավարտելուց պես կոմպոզիտորն սկսեց ուսումնասիրել էքսպերիմենտալ վոկալ արվեստը և բացահայտել մարդկային ծայրի երևակայական և աներևակայական սահմանները: Դրանք տեղ են գտել իր հոգևոր ժանրի ստեղծագործությունների մեկնաբանություններում: Օրինակ 2016-ին «Judas Mercator Pessimus»-ը («Հուդա ամենավատ վաճառականը») տղամարդկանց վոկալ-անսամբլի համար, «Labia Mea» («Իմ շուրթերը») 8 ծայրի համար, 2018-ին «Ad Voc»-ը գրված ծայրի և ֆլեյտայի համար, 2021-ին «Մանուկ» ստեղծագործությունը՝ 1 ծայրի և ծայնագրային սարքի՝ Play box-ի համար:

Իսկ ինչ վերաբերվում է կիրառվող վոկալ տեխնիկաներին, ապա կոմպոզիտորը երգեցողության միջոցով ստեղծում է օբերտոնային հնչյունների շերտեր, վոկալ մուլտիֆոնիկներ, կոկորդային երգեցողություն, տարբեր գործիքներ

րի, բնության և էլեկտրոնային ծայրերի տեմբրային իմիտացիաներ, որոնք արժանի են առանձին ուսումնասիրության:

Վահրամ Սարգսյանի երկերի ոճական առանձնահատկությունները տարբեր ստեղծագործական շրջաններում արտահայտում են տարբեր ուղղություններ: Այսպես՝ ուսանողական շրջանի ստեղծագործություններին բնորոշ է նեոդասականությունը: Դրանից հետո որոշ ժամանակ հետաքրքրվել է սերիալ համակարգով գրված երաժշտությամբ, որը թեև ոչ հիմնովին, սակայն էպիգոնիկ կերպով ներգրավվել է նրա հետագա գործերում: Բացի այդ, իր վոկալ երկերում կիրառել է սպեկտրալ երաժշտություն՝ համակարգչային հնչյունային տեմբրերի միջոցով ծայրի ակուստիկ կողմի ընդգծումը, ինչպես նաև կոմիտասյան սկզբունքով միկրոտոնալ համակարգը:

Այժմ հակիրճ անդրադարձ կատարենք վաղ շրջանի վոկալ ստեղծագործություններից մեկին՝ «Լույս Ջվարթ»-ին a cappella երգչախմբի համար: «Լույս զվարթ»-ը դարձել է կոմպոզիտորի երաժշտության այցեքարտերից մեկը, կատարվել բազմաթիվ անգամներ՝ մի շարք երգչախմբերի մեկնաբանմամբ: Ինչպես հեղինակն է նշում, այն ուսանողական շրջանում գրված միակ գործն է, որը չի ենթարկվել որևէ փոփոխությունների և խմբագրությունների: «Լույս զվարթ»-ը գրվել է 2001-ին՝ կոնսերվատորիայում ուսանելու տարիներին: Ստեղծագործության համար բովանդակային հիմք է ծառայել Հայ Առաքելական եկեղեցու կիրակաների գիշերային ժամերգության շարականի տեքստը:

Պահպանելով հայ հոգևոր մոնոդիային բնորոշ առանձնահատկությունները, կոմպոզիտորը թեման հնչեցնում է սուպրանո ծայնաբաժնում՝ պարզ, թափանցիկ ֆակտուրայով: Սյուս ծայրերը ձեռք են բերում ֆոնային նշանակություն, իսկ նրանց համագործակցության արդյունքում ձևավորված լադահարմոնիկ կառույցն ակորդային տիրույթում ստեղծում է յուրօրինակ տեմբրային հնչողություն: Այս սկզբունքը պահպանվում է մեկ ամբողջական պարբերություն կազմող երկի ամբողջ ընթացքում:

Ռիթմիկ պատկերներում նկատելի են կոմպլիմենտար տարրերը, որոնց հնչյունային հիմքը բխում է գլխավոր թեմայի ինտոնացիաներից:

Խոսքի և երաժշտության ներդաշնակ համադրության վկայությունն են անընդհատ կատարվող չափերի փոփոխությունները, որոնց շնորհիվ բառերի վերջին վանկերը համընկնում են հաջորդ տակտերի ուժեղ մասերին:


Հատկանշական է նաև այն, որ երկուսից երեք ռոպե տևողությամբ, դանդաղ տեմպով ընթացող ստեղծագործության տեմպը կոմպոզիտորը պարտիտուրում չի նշում, այն թողնում է խմբավարի ազատ մեկնաբանությանը:

«Լույս Ջվարթ»-ը կատարվել է 2014-ին եվրոպական երիտասարդական երգչախմբերի փառատոնի ժամանակ Հայաստանի փոքրիկ երգիչների կատարմամբ Տիգրան Հեքեքյանի ղեկավարությամբ:

Հոդվածի վերջում կցանակալիք շնորհակալություն հայտնել Վահրամ Սարգսյանին անհրաժեշտ նյութերի տրամադրման համար: Մեր կողմից անդրադարձը Վահրամ Սարգսյանի արվեստին մեկնարկված է: Մոտ ապագայում նպատակ ունենք անդրադառնալ կոմպոզիտորի ստեղծագործական երկրորդ և զալիք շրջանի երկերի ուսումնասիրությանն ու մանրամասն վերլուծությանը:

ՍԱՄՎԵԼ ՍԻՐՈՒՆՅԱՆ
Երաժշտագետ,
Երևանի պետական Ա.Բաբաջանյանի անվ.
երաժշտամանկավարժական թղեջի
3-րդ կուրսի ուսանող

Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի 55-ամյակը



2022-ի դեկտեմբերի 9-ին Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի դափնեհանում տեղի ունեցավ տուն-թանգարանի 55-ամյակին նվիրված հանդիսությունը: Միջոցառմանը հրավիրված էին գործընկեր հաստատությունների ներկայացուցիչներ, թանգարանի բարեկամ մշակույթի գործիչներ և գիտական խորհրդի անդամներ, նախկին աշխատակիցներ: Բացման խոսքում տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանը շնորհավորեց հյուրերին Երևանում առաջին երաժշտական հուշային թանգարանի բացման տարեդարձի առիթով և կարևորեց աշխատակիցների դերը մշակութային այս կարևոր կենտրոնի կայացման գործում: Միջոցառմանը ներկայացվեց «55-ամյա թանգարանի պատմությունը լուսանկարների խճապատկերում» խորագրով ժամանակավոր ցուցահանդեսը:



Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյան



ԵՊԿ պրոֆեսոր Արմեն Բուդաղյան



Կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյան

Ալեքսանդր Իրադյանի ստեղծագործության շուրջ

Սույն հոդվածը ընթերցվել է ԵՊԿ ՈՒԳՍԸ Կոմստանտին Սարաջևի ծննդյան 145-ամյակին նվիրված գիտաժողովի շրջանակներում 2022-ի նոյեմբերի 30-ին ԵՊԿ Ակումստիկ լաբորատորիայում: Դեկավար՝ դասախոս Արմենուհի Բաբլոյան

«Ես պետք է մարդկանց ցույց տամ, որ դասական երաժշտությունը երբեք չի լինելու ծանծաղիկ, մենք միշտ ասելու բան ունենք ու միշտ կարող ենք նորովի մատուցել»

Ալեքսանդր Իրադյան

Երիտասարդ կոմպոզիտոր, դաշնակահար և դիրիժոր Ալեքսանդր Իրադյանը մի արվեստագետ է ում ուշադրության կենտրոնում է՝ մարդ-հասարակություն, ունկնդիր-երաժիշտ և ունկնդիր-կոմպոզիտոր հարաբերությունները՝ ամփոփված համամարդկային գաղափարներով: Նրա երաժշտությունն ունի ձգողականության ուժ ունկնդրին գրավելու դեպի իրեն: Նոր մատուցման ձև, սևագրեստ անձրևանոցներով կանայք, ովքեր ուրվականների պես շոջում են օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շուրջ, «Ինքնասպանի գրառումները» և վերջապես «Վերջին գիշերը», որը խորհրդավոր է թե՛ սյուժետային, թե՛ երաժշտական տեսանկյուններից:

Դեռ երիտասարդ տարիքում նա հասցրել է մի շարք նախագծեր իրականացնել. ցույց տալով իր յուրահատուկ տաղանդը՝ դրանք ներկայացրել նորովի ու հետաքրքիր հասարակության բոլոր խավերի համար, տարածելով որակյալը:

Ալեքսանդր Իրադյանը բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում (2007 թ.), պրոֆեսոր Ստեփան Ռոստոմյանի դասառանում, 2009-ին ընդունվել է կոնսերվատորիայի սիմֆոնիկ դիրիժորության բաժին (դեկավար՝ պրոֆեսոր Յուրի Դավթյան): 2014-ին ուսումը շարունակել է Բրյուսելի թագավորական կոնսերվատորիայի դիրիժորության բաժնում (դեկավար՝ պրոֆեսոր Փիլիպ Ժերար), ապա 2016-ին Բեռլինի արվեստների համալսարանում, դիրիժորական միջազգային ակադեմիա (դեկավար՝ պրոֆեսոր Սթիվեն Սլոան): Մասնակցելով բազմաթիվ մրցույթ-փառատոների, արժանացել է մի շարք մրցանակների:

Իրադյանի ստեղծագործություններն ու բազմապիսի մշակումները հնչել են ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային բեմերում: Հանդես է եկել որպես կոմպոզիտոր, դիրիժոր և դաշնակահար Հայաստանում, Գերմանիայում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Սլովենիայում, Բելգիայում և այլն:

Մեծ է նաև նրա հասարակական գործունեությունը. օրինակ՝ սեփական ուժերով 2021-ին կազմել է *Sonoris* նվագախումբը Բեռլինում, որի առաջին համերգը տեղի է ունեցել սույն թվականի աշնանը: *Sonoris* նվագախմբի հետ իրականացրել է *Grounded* նախագիծը, որի ժամանակ դաշնիժում աթոռների և բեմի փոխարեն, ամբողջ հարթակը պատված էր իրական հողով և խոտերով: Նվագախումբը նստած է մեջտեղում, ունկնդիրը կարող է մոտենալ, նստել իր նախընտրած գործիքի կողքին, դիպչել հողին: Նպատակը՝ լսողին մոտեցնել այդ անիրականի և հաստատել կապ իրական բնության հետ:

Սույն թվականին Հայաստանում ներկայացրեց իր գրած մանկական ներկայացումը, որը կոչվում է «Բեթհովենը սարերում», այն գրված է նվագախմբի և պատմիչի համար: Իրականացվել է Հայի Պետրոսյանի հետ համատեղ, կամերային թատրոնում, որտեղ առանցքայինը պարզ կերպով ներկայացված պատմվող նյութն էր:

Այս նախագծերի հետ մեկտեղ ցեղասպանության 106-տարեկիցի առթիվ իր դեկավարությամբ Հայաստանում հնչեց Սոցարտի «Ռեքվիեմ»-ը, ինչպես նաև վերջերս նախաձեռնել էր ԵՊԿ ուսանողական սիմֆոնիկ նվագախմբի և օպերային ստուդիայի հետ միասին ներկայացնել Սոցարտի «Դոն ժուան» օպերան, ցավոք անձամբ չկարողացավ դեկավարել հետ:

Ալեքսանդր Իրադյանի մտքերը նույնքան էքսպերիմենտալ են, որքան նրա երաժշտությունը: Նա կարծում է, որ երաժշտություն լսելիս պարտադիր չէ ամեն մի հնչյունից հաճույք ստանալ, այլ ունկնդիրը պետք է տառապի, անցնի



Ալեքսանդր Իրադյան

Մեծ նշանակություն և ազդեցություն է ունեցել նաև դասերը ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ և կոմպոզիտոր Ստեփան Ռոստոմյանի մոտ: «Ստեփան Ռոստոմյանը երբեք ինձ հետ կռիվ չէր տալիս. «այստեղ պետք է բեմով, մյուս տեղում դիմել, սա լավ չի հնչում» և այլն: Նա բացում էր պարտիտուրը, զննում լռությամբ, փակում էր ու ասում. - «Գնա և լսիր Պենդերբեկի, Ստրավինսկի, Շոստակովիչ, կնայես նաև պարտիտուրները, կտեսնվենք մյուս շաբաթ»: Այսպիսով, պարոն Ռոստոմյանը ինձ ուղղորդում էր դեպի իմֆորմացիայի կլանում»:

Կոմպոզիտորի ստեղծագործական ոճն ակնառու նկատում ենք *Remonstrance, Mr T: The story of a comic* (Պարոն ԹԻ, կոմիկի պատմությունը), *DNA 15* (ՆԹ 15), «Վեց պատասխան» վերնագրով 2-րդ սիմֆոնիայի և *The Last Night* («Վերջին գիշերը») երկերում:

Այս բոլոր ստեղծագործությունների համար գլխավոր օղակը թեմատիկ նյութի ընտրությունն է, ինչը կապված է կոմպոզիտորի կերպարային մտածողության հետ: Հանդիպում ենք պատմական, կատակային թեմաների ու կերպարների, որոնք ունեն հոգեբանական և փիլիսոփայական դիմանկար և օժանդակում են կոմպոզիտորի խոսքի՝ ունկնդրին ավելի դյուրին հասնելու հարցում: Երաժշտական արտահայտչական միջոցները ծառայում են այդ մտքի իրականացմամբ: Արդյունքում բազմապիսի նշանակություն է ստանում թեմատիկ գիծը, լադա-հարմոնիկ համակարգը, ֆակտուրան:

“Remonstrance”-ը ստեղծագործություն է ջութակի, թավջութակի և հարվածայինների համար: Այն գրվել է 2008-ին՝ կոնսերվատորիայի 1-ին կուրսում ուսանելու տարիներին: Այստեղից եկավ նրա երկերի հիմնական գաղափարը: Այն է՝ երաժշտությունը որպես միջոց դիմացինի հետ հաղորդակցվելու համար:

Ստեղծագործության ամբողջական անվանումն է՝ *Remonstrance Protest Against Violence* այսինքն՝ «Պայքար բռնության դեմ»: Այստեղ արտահայտվում է՝ աշխարհում տիրող բռնությունը ու պատերազմների դեմ պայքարը: Եթե դիտարկենք կոմպոզիտորի ստեղծագործություններից ցանկացածը, կտեսնենք “g”, “fis”, “as” հնչյուններից բաղկացած մոտիվը, որն արտահայտում է և շարունակելու է արտահայտել դեպրեսիա, մեզատիվություն, տառապանք: Այս մոտիվը կոմպոզիտորի ինքնագիրն է (**астропаф**), որի միջոցով նա փոխանցում է այն, ինչ զգում է:

Կոմպոզիտորի տարբեր ժամանակահատվածներում գրված ստեղծագործություններից, որտեղ զարգացման հիմք է հանդիսացել վերոնշյալ մոտիվը, առանձնացնենք “The last night” («Վերջին գիշերը») ստեղծագործությունը: Այն գրվել էր որպես բալետային սյուիտ, սակայն հետագայում վերափոխվեց պոեմի՝ գրված դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի համար:

Ստեղծագործության վրա կոմպոզիտորն աշխատել է մոտ 1 տարի: Նվագախմբային տարբերակի պրեմիերան տեղի է ունեցել 2018-ին Բեռլինում՝ Մագդեբուրգի ֆիլիարմոնիկ նվագախմբի կատարմամբ, դիրիժոր՝ Ալեքսանդր Իրադյան: Դրան հաջորդեց 2021-ին Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ նվագախմբի ուղեկցությամբ, դաշնակահարուհի Լուսինե Խաչատրյանի կատարում-ներկայացումը

այդ ինքնամաքման ճանապարհը, որպեսզի դաիլիճից մի փոքր այլ մարդ դուրս գա:

Զկա մեկը, բայց կան շատերը, ովքեր ազդեցություն են ունեցել Ալեքսանդր Իրադյան կոմպոզիտորի երաժշտական մտահղացումների, գեղագիտական հայացքների ձևավորման գործում: Ինչպես ինքն է նշում, իր ամբողջ գործունեության առաջընթացի ընթացքում նրան ուղեկցել է Սերգեյ Պրոկոֆևի, Դմիտրի Շոստակովիչի, Իգոր Ստրավինսկու, Արամ Խաչատրյանի, Ռազարոս Սարյանի, Ավետ Տերտերյանի, երաժշտությունը:

Հայաստանում:

Ստեղծագործության հիմքում ընկած է մի քանի պատմական իրադարձություն, եղուարդ Ռեդինսկու «Վերջին ցարի, վերջին գիշերը» ստեղծագործությունը, ինչպես նաև սովետական իշխանության օրոք գաղտնի պահված օրագրեր, վկայություններ: Հաջորդ սյուժետային ուղղվածությունը ներկայացնում է երկրորդ համաշխարհային պատերազմը. 1943 թվական, համակենտրոնացման ճամբար, հրեա ընտանիք, որ սպասում է զնդակահարման հրամանին:

Օսմանյան կայսրության կողմից 1915-ի ցեղասպանությունը հայերի նկատմամբ XX դարի առաջին հանցանքներից մեկն է, որը մնաց անպատիժ և տարածեց վայրագություններ ու հանցագործություններ այլ ժողովուրդների հանդեպ ևս: Ցեղասպանության 100-ամյակին Իրադյանը նվիրել է “*DNA 15*” կոնցերտը ջութակի, թավջութակի, դաշնամուրի և նվագախմբի համար: «Վերջին Գիշերը» հանդիսանում է “*DNA 15*” անմիջական շարունակությունը: Ռեքվիեմի թեման, որը հանդես է գալիս “*DNA 15*”-ի վերջում, ներկայացնում է արձագանքներ գալիք իրադարձությունների մասին, որն էլ դառնում է «Վերջին գիշերը» ստեղծագործության բովանդակային հիմքը: Պատմականորեն ստեղծագործությունում ցույց է տրվում այն գործընթացի սկիզբը, որը հանգեցրեց հոլոքոստի, և դարձավ մարդկության ամենամեծ ողբերգություններից մեկը:

Որպես այդպիսին կառուցվածքային հստակ սահմաններ կոմպոզիտորի մոտ չենք նկատում, երաժշտական նյութի մեկ թեմայի շուրջ ծավալումը հանգեցնում է միմիակիզի, որը բնորոշ է Ալեքսանդր Իրադյանի ստեղծագործական ոճին:

Երկի զարգացման սկզբունքը կոնտրաստայնությունն է: Այն պահին, երբ ունկնդիրը լարված լսում է տագնապ հաղորդող երաժշտական դարձվածքներ, հանկարծակի հնչում է վալսային հատված, կոլաժ՝ մեջբերված հրեական ժողովրդական երգից: Վալսը պատկերում է հրեաներին՝ կոնցենտրացիոն ճամբարում զնդակահարությանն սպասելիս: Թեման պատկերում է շնչի մի փոքր հատվածը, որոնք կյանքի լուսավոր հիշողություններն են: Ոգևորվորությունը հանգեցնում է կոլապսի և ամբողջ դրամատուրգիան բերում է դեպի մարդկության պատմության կոլապս:

Ստեղծագործության կազմում ընդգրկված է նաև երգչախումբը, որի միջոցով կոմպոզիտորն անմիջական կապ է հաստատում (խոսքի միջոցով) ունկնդրի հետ: Հիմքում հայտնի ռուսական տեքստն է. “**Боже, царя храни**”:

Կարևոր է ընդգծել շեփորի նվագաբաժինը, որը տվյալ դեպքում արտահայտում է ծաղր, անգամ վերածվում ճակատագրի թեմայի: Ինչպես նշել է ինքը կոմպոզիտորը՝ դա իր երբևէ գրված ամենամեծ երգիծանքն է: Շեփորի նվագաբաժնում հնչող “*c-g-e*” դարձվածքը շարունակ հանդիպում է ստեղծագործության ընթացքում տարբերակման սկզբունքով և դառնում զարգացման միջոց:

«Վերջին Գիշերը» թատերական ներկայացման գլխավոր դերակատարը և բեմադրողը դաշնակահարուհի Լուսինե Խաչատրյանն է: Նա մարմնավորում է ժամանակը, որը սպանելով մարդկանց, տանում է դեպի հին հիշողություններ և պատճառում վերջ չունեցող ցավ ու տառապանք:

Այս ամենով հանդերձ ստեղծագործության ավարտը լատենտություն է ներշնչում, հույս և լույս:

Իր ստեղծագործություններում բացի սեփականը ներկայացնելուց կարևորում է նաև անցյալից եկած ժառանգությանը և կոլաժային տարբերակով փորձում ևս մեկ անգամ հիշեցնել դրանց մասին:

Այսպիսով՝ կարծում ենք, որ «Վերջին գիշերը» ստեղծագործության մտահղացումը, թեմայի ընտրությունը, այն դարձնում է արդիական բոլոր ժամանակների համար: Խնդիրը, որը մարդկության առջև ծառացել է դարեր շարունակ, դեռևս մնում է անլուծելի, ժամանակահատվածներ, որոնք կարող են կրկնվել և դրանով հանգեցնել նոր ողբերգությունների:

Հոդվածի վերջում ցանկանում ենք շնորհակալություն հայտնել կոմպոզիտոր Ալեքսանդր Իրադյանին, նրա հետ ունեցած հարցազրույցի և աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի տրամադրման համար:

ՄԱՆԵ ՍՎԱՋՅԱՆ
Երաժշտագետ,
Երևանի պետական Ա.Բաբաջանյանի անվ.
երաժշտամանկավարժական թղեջի
3-րդ կուրսի ուսանող

Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի 55-ամյակը

Թանգարանի գիտաշխատող Ինեսա Խաչատրյանի հեղինակած «55 կադր 55-ամյա թանգարանից» ֆիլմը, որի բացառիկ կադրերում խտացված էր տուն-թանգարանի՝ կես դարից ավելի շարունակվող հարուստ տարեգրությունը:

Այնուհետև Սպենդիարյանի տանը նորից թևածեց նրա երաժշտությունը՝ Թամար Հարությունյանի (ֆլեյտա), Վարդգես Հովհաննիսյանի (ֆագոտ), Էրիկ Գրիգորյանի (հոբոյ) և Կատարինե Հովսեփյանի (դաշնամուր) կատարմամբ: Տուն-թանգարանի կողմից շնորհակալագրեր հանձնվեցին նախկին աշխատակիցներ՝ գիտաշխատողներ Կարինե



ԵՊԿ պրոֆեսոր
Դավիթ Ղազարյան

Սարգսյանին և Սարգիս Հովհաննիսյանին, ինչպես նաև թանգարանի նորեկ գիտաշխատող Կատարինե Հովսեփյանին:

Մասնակիցների տոնական լուսանկարը ևս մեկ կադրով համարեց թանգարանի շարունակվող պատմության տարեգիրքը:

ՍԻՐԱՐԹԻ ԵՆԳԻՐԱՅԱՆ
Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի
գիտաշխատող

«Արվեստի Ճակատում» նախագծի մեկնարկը

1 Մեկնարկել է «Արվեստի ճակատում» նախագիծը, որի հիմնական նպատակն է օգնել պատերազմից վերադարձած երիտասարդներին մնալ արվեստում՝ կազմակերպելով համերգներ 33 տարբեր համերգասրահներում: Նախագիծը ձեռնարկել է «Թայմլեսս Արթ» մշակութային հիմնադրամն ի դեմս երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու Նարինե Ավետիսյանի, որը ներկայացրեց ամբողջ միջոցառումը:

Առաջին համերգը տեղի ունեցավ սույն թվականի դեկտեմբերի 3-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում: Միջոցառմանը ներկայացված էր նկարչուհիներ Արմենուհի Սաղոսապյանի (Սաղարթ), Աննա Մալխասյանի



Արամ Ամալյան

նի, Մարա Խալաթյանի, Սիլվա Գասպարյանի, Նունիկ Ամիրխանի գեղարվեստական նկարների ցուցահանդեսը (հովանավոր՝ Արմեն Գասպարյան): Սաղարթը գործվածքի վրա բառերի նկարչության արվեստ է, որի համար օգտագործվում են ոչ ջրային լուծույթ և մետաքսե ներկեր: Բոլոր ոգեկոչումներն ու ստեղծագործությունները հիմնված են հայկական այբուբենի և զարդարվեստի վրա, որոնք վկայում են հայ ժողովրդի դարավոր գոյությունը և նրա հոգևոր նյութական կյանքի մշտնջենական ընթացքը:



Ժողովրդական մեղեդիներ

Համերգային ծրագրում ելույթ ունեցան 44-օրյա պատերազմի կոնսերվատորիական մասնակից-գինվորները: Ներկա էին նաև նրանց մայրերը: Միջոցառումն անցավ հայերենասիրության, մարդասիրության, զոհված գինվորների հիշատակը վառ պահելու և հավերժացնելու հուզական ջերմ մթնոլորտում: Համերգին մասնակցում էին ինչպես կամավոր ծառայած, այնպես էլ պարտադիր գինվորական ծառայության մեջ գտնված երաժիշտ-գինվորները: Նրանք հանդես եկան, ինչպես մենակատարային, այնպես էլ անսամբլային ստեղծագործություններով: Հնչեցին ինչպես արևմտաեվրոպական այնպես էլ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ և հայկական ժողովրդական երգեր:

Ներկայացնում ենք համերգային ծրագրի մասնակիցներին անուն առ անուն Արման Շահինյան, Վաչագան Խաչատրյան, Հակոբ Արզումանյան, Մանվել Շախլյան, Հայկ Մելքոնյան, Բաբկեն Արիջյան, Նարեկ Խաչատրյան, Արման Ամալյան, Անուշ Պետրոսյան, Արման Պետրոսյան, Արտյոն Կնյազյան: Համերգին մասնակցեցին Կամերային վոկալ անսամբլը՝ 33 արվեստի վաստակավոր արտիստ,



Կամերային վոկալ անսամբլ ղեկ.՝ Աննա Մալխասյան




Սրբապատկերների ցուցադրություն

պրոֆեսոր Աննա Մալխասյանի ղեկավարությամբ: Նախագիծն ունի շարունակական բնույթ: Հաջորդ միջոցառումը կազմակերպվենք նախատեսված են իրականացնել Ղ.Սարյանի արվեստի դպրոցում:

Լ. Ներսիսյան-Մարտիրոսյան
երգչուհի, լրագրող

Անահիտ Կիրակոսյանի «Հայ ժողովրդական նվագարաններ» ձեռնարկը



անգլերեն լեզուներով):

Անահիտ Կիրակոսյանը հայ երաժշտական ֆուլկլորագիտության դասական Մարգարիտ Բրուտյանի (1922-2002թթ.) սաներից է, հայ ժողովրդական երաժշտության, և վերջինիս կատարողական արվեստի ճանաչված գիտակ և հետազոտող: Ոլորտներին մվիրված բազմաթիվ հոդվածների, նաև ծայնագրյալ ժողովածուի և մենագրությունների հեղինակ է: Այդ թվում՝ «Իրանի Սպահանի շրջանի Փերիա գավառի ժողովրդական և աշուղական երգերի ընտրանի» (Փասադենա, 1996 թ.), «Հովհաննես Դարբինյան – Խմբավարն ու թառահարը» (Եր., 2000 թ.), «Մարգարիտ Բրուտյան – Կենսամատենագիտություն» (Եր., 2000թ., 2007 թ.), «Արգաս Ռուկանյան – Մանկավարժը և հայ երգեցողության դպրոցը» (Եր., 2008 թ.) և այլն:

Կիրակոսյանը հայտնի է և հայ ավանդական գործիքային երաժշտությանը մվիրված աշխատություններով: Նրա գրչին են պատկանում «Հայ դուդուկահարներ» խորագրով բաժինը «Դուդուկը» գիրք-ալբոմում (Եր., 2007թ., UNESCO), «Հայկական ժողովրդական նվագարաններ» գիրք-ալբոմը (համահեղինակ՝ Ա. Բաղդասարյան, Եր., 2008թ.):

Հատկապես մշելի է Կիրակոսյանի «Հայ ժողովրդական նվագարանային կատարողական արվեստ» (Եր., 2011 թ.) ծավալուն աշխատությունը, որը ոլորտի՝ ազգային նվագարանների, նաև, մասնավորապես, XX և, մասամբ, XXI դարերի կատարողների (դուդուկահարների, սրնգահարների, թառահարների, քամանչահարների, սանթուրահարների և այլ կատարողների), և ավանդական կատարողական խմբերի յուրօրինակ համրագիտարան է:

Կիրակոսյանի գործիքագիտության աշխատություններից է և ներկա ձեռնարկը: Այն դպրոցահասակ ընթերցողին ուղղված հայ ժողովրդական նվագարանների մասին առաջին և այժմ միակ հրատարակությունն է մեզանում: Ձեռնարկում ներդաշնակորեն միահյուսվել են հեղինակի մասնագիտական երեսակների երկուսը՝ հետազոտական և մանկավարժական, քանի որ Ա. Կիրակոսյանը 1980 թվականից անընդմեջ դասավանդում է ԵՊՀ Հայ երաժշտական ֆուլկլորագիտության ամբիոնում: Վարում է «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն», «Կատարողական արվեստ», անցյալ տարիներին նաև «Հայկական նոտագրություն», դասընթացները, ղեկավարում է ֆուլկլորագիտական մասնագիտական դասարան: Նյութը ներկայացված է

պատշաճ գիտական մակարդակով, նաև գեղեցիկ հայերենով, միաժամանակ պարզ, մատչելի լեզվով, ընթերցելի և հասու պատանեկան ընկալմանը: Վերջինիս նպատակն է և ձեռնարկի կուռ կառուցվածքը, նյութի կանոնավոր դասավորությունը, բովանդակության ծավալման, զարգացման տրամաբանական ընթացքը, որ կատարվում է խնդրոթեմային լիովին համապատասխան, միանգամայն ընդունելի և ողջունելի՝ «ընդհանուրից դեպի մասնավորը» շահեկան սկզբունքով:

Այսպես, ձեռնարկի Առաջաբանում տրված են ընդհանուր գիտելիքներ «նվագարան» երևույթի, երաժշտական գործիքների տեսակների, նվագածու «վարպետ կատարողի» մասին, ինչն ուղեկցվում ու հավելվում է տեղին բերված հղումներով Սուրբ Գրքին, հայ միջնադարյան պատմագրությանը, մանրանկարչությանը:

Ուշագրավ է, որ Առաջաբանում և հետագա տեքստում կիրառվող, կենցաղում և հայ երաժշտագիտության մեջ ընդունված և տարածված «երաժշտական գործիք» արտահայտության հետ մեկտեղ, շրջանառվում է մեզանում համեմատաբար սակավ հանդիպող «նվագարան» եզրույթը: Ցանկալի է, որ այս հնուց պահպանված, հայեցի, գեղեցիկ եզրույթն իր ածանցյալ արտահայտություններով՝ նվագարանային կամ «նվագարանական» երաժշտություն, «նվագածու» (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հատոր երկրորդ, Վենետիկ, 1837, էջ 447) և այլն, ավելի լայն կիրառվի հայերիս մեջ, և հաստատապես ընդգրկվի մայրենի լեզվի բառապաշարում արդեն իսկ դպրոցական հասակից (տերմինը խնդրահարույց է, քանի որ ածանցյալ իմաստներով իմաստագրվում է և օրինակ չի արտահայտում գործիքագիտության և գործիքավորում տերմինների իմաստը. - **խմբ.** տե՛ս՝ Մ. Բրուտյանի տերմինների բառարանը հրատարակված երաժշտական Հայաստան 4 (31) 2008-1 (32) 2009 և ԵՊՀ տերմինաբանական խորհուրդ):

Առաջաբանին հաջորդում է խնդրո մասնավոր ոլորտների մանրամասն դիտարկումը: Երեք առանձին բաժիններով ներկայացվում են հնամենի, բայց և մեր օրերում ևս խիստ կենսունակ, հայկական միջավայրում տարածված, սիրված ավանդական նվագարանները, յուրաքանչյուրն իր տեսականու՝ «բազմանդամ ընտանիքով»: Դրանք են փայտյա փողային շվին, սրինգը, զուռնան, պլուն, պարկապուլե, դուդուկը, նաև մանկական շվիկը, թութակը, լարային կամիթային սազը, ուղը, թառը, քանոնը, լարային աղեղնավոր քամանչան, քամանին, հարվածային դիլը, դափը, լարային-հարվածային սանթուրը: Հիշատակելի է, որ հնում, ինչպես վկայված է հայ միջնադարյան պատմիչների կողմից և մանրանկարներում, հայկական առօրյայում կիրառվել են նաև պղնձյա փողային նվագարաններ (մասնավորապես՝ պատերազմական գործողությունների ընթացքում):

Անդրադարձ է կատարվում նաև հայ եկեղեցու ծիսաարարողակարգային «դոդաճըղ և աղնկային» քչոցին, զանգին, կոչնակին, ծնծղային: Վերջիններս ավանդաբար օգտագործվել են, մասնավորապես, Կոստանդնուպոլսի (այժմ՝ Ստամբուլ) հայկական եկեղեցիներում: Նշելի է, որ

հեղինակը նվագարանները նկարագրում է հնարավորինս լայն իմացական և տեղեկատվական շրջանակներում՝ դիտարկելով նվագարանի ծագումը, անվան ստուգաբանությունը, կիրառման տարբեր ոլորտները, անհատ կատարողները, ներկայացվում են նվագարանների հետ կապված հետաքրքրաշարժ առասպելները և այլն:

Ձեռնարկը շարունակվում է հայ նվագարանային երաժշտության և մեկ ոլորտի դիտարկմամբ: Դա անսամբլային նվագածության արվեստն է, որն, ինչպես հայտնի է, հնագույն ծագում ունի հայոց մեջ, և ազգային մշակույթի անքակտելի մասն է եղել մշտապես: Հեղինակը բացատրում է, թե ի՞նչ է նվագարանային անսամբլը, ապա անդրադառնում հայ ավանդական նվագարանային անսամբլներին՝ հղելով Կոմիտաս վարդապետին, և ներկայացնում ժողովրդական նվագարաններից բաղկացած մերօրյա անսամբլները և դրանց յուրահատկությունները:

Ձեռնարկի վերջաբանում խնդրո հայ ժողովրդական նվագարանները դիտարկվում են հայ կոմպոզիտորական ստեղծագործության տեսանկյունից: Հիշատակվում են կոմպոզիտորներ Խաչատուր Ավետիսյանը՝ քանոնի հայ ժամանակակից կատարողական արվեստի հիմնադիրը, Յուրի Գևորգյանը, Գրիգոր Հախինյանը, Ռուբեն Ալթունյանը, որոնք ստեղծել են բազմաժանր երկացանկ դուդուկի, շվիի, քանոնի համար: Հիշատակվում է և ժամանակակից մշակավոր կոմպոզիտոր Ավետ Տերտերյանի անդրադարձը հայ ժողովրդական նվագարաններին, մասնավորապես զուռնային, դուդուկին՝ 3-րդ Սիմֆոնիայում, քամանչային՝ 5-րդ Սիմֆոնիայում: Եվս մեկ ավանդական նվագարան՝ դափն Ավետ Տերտերյանը գործի է դրել իր 7-րդ Սիմֆոնիայում:

Խնդրո ոլորտը հայտնի է իր շնորհալի, բազմահմուտ նվագարանագործ վարպետներով՝ Վարդան Բունի, Աշոտ Պետրոսյանը, Մարտին Խաչատրյան, Գեորգի Մինասով, Սիրան Դեմիրճյան, Հակոբ Խալաթյան, Սամվել Երկնափեշյան, Ռուբիկ Ռուշանյան, Ալբերտ Ջաքարյան և շատ ուրիշներ, որոնք ոչ միայն պատրաստել են ավանդական նվագարաններ, այլ նաև, հեղինակի խոսքերով՝ փնտրել են վերջիններիս «հնչողության նոր երանգներ», զգալիորեն լայնացրել դրանց տեխնիկական հնարավորությունները:

Ձեռնարկն աչքի է ընկնում իր հարուստ նկարագրողությամբ: Գունավոր, վառ, զուռնեղ, տեխնիկական հմտությամբ, գեղեցիկ ձևավորմամբ, գեղարվեստական բարձր մակարդակով կատարված լուսանկարների միջոցով ներկայացված են ձեռնարկում դիտարկվող բոլոր նվագարանները (լուսանկարների հեղինակ և ձևավորող՝ Վահան Պողոսյան), ինչպես նաև նվագարանային խմբերը, որ լավագույնս լրացնում է հեղինակի բովանդակալից խոսքը: Վերջինս մանրամասնում և ամբողջացնում են տեղին բերված Ծանոթագրությունները: Միաժամանակ խնդրո մասին հավելյալ տեղեկություններ և գիտելիքներ ստանալու համար հեղինակն առաջարկում է գործիքագիտության գրականության մի փոքր ընտրանի:

Հայ ժողովրդական նվագարանները և նվագարանային երաժշտությունը հայ իրականության

ВЕХИ НАЦИОНАЛЬНОЙ КУЛЬТУРЫ

Имя скрипача, заслуженного артиста РА, рекордсмена книги рекордов Гиннесса Николая Мадояна долгое время, особенно за последнее десятилетие, является своего рода олицетворением, символом успехов как армянской, так и западной скрипичной школы.

Именно он, одним из первых в постсоветский период Армении, сумел возродить славу своих предшественников, принес как национальному, так и западному скрипичному искусству новые лавры на мировой арене.

Николай Мадоян начал играть на скрипке в семилетнем возрасте. В 1980 году поступил в музыкальную школу им. Аветы Габриеляна (педагог Эмма Нурамян). В 1984 году был переведен в спецшколу имени Чайковского, где учился у профессора Ереванской консерватории Грачья Богданяна. В ноябре 1986 года переехал в Новосибирск для учебы в спецклассе одаренных детей при новосибирской государственной консерватории им. Глинки по приглашению известного профессора скрипки Захара Брона. В 1989 году вместе с классом Захара Брона, учениками которого также являлись Вадим Репин, Максим Венгеров и Наталья Прищепенко, переехал в Любек (Германия), где продолжил занятия в Высшей музыкальной академии Любека. В 1999 году Николай Мадоян закончил аспирантуру ереванской государственной консерватории им. Комитаса (класс проф. Арама Шамшяна). А в 2001 году получил степень *PhD* по скрипичному исполнению в берлинском университете искусств (проф. Уве Хайберг). Интересен тот факт, что степень исполнительского мастерства Николая Мадояна была на таком высоком уровне, что и в консерватории им. Комитаса, и в берлинском университете ему сообщили, что он сам мо-



жет получить степень аспирантуры без руководства профессора. В дальнейшем Николай Мадоян был удостоен звания «Почетный профессор» ереванской государственной консерватории имени Комитаса.

Николай Мадоян выступал со многими известными дирижерами и оркестрами международного масштаба.

В рамках небольшой статьи невозможно перечислить все сделанное Мадояном за свою творческую биографию на международной музыкальной арене.

Важно сказать о главном: очень быстро, за считанные годы Николай Мадоян заставил говорить о себе как о сильной художественной личности.

А недавний его концерт, прошедший под эгидой *NIKOLAY & NICCOLO* в Национальном академическом театре оперы и

балета им. Спендиарова с оперным оркестром, которым дирижировал заслуженный артист РА Карен Дургарян, имел большой успех в концертной жизни нашей столицы.

Не угодная публике, на вечере именитый скрипач сумел передать слушателю подлинность некоторых созданий великого Паганини.

В «Интродукциях и вариациях» на темы различных арий из опер Дж. Россини «Танкред», «Золушка», «Моисей», а также Йозефа Вайгеля «Любовь моряка», сыгранных Мадояном, были переданы яркие проявления музыкального романтизма творчества Паганини.

Исполнительство Мадояна было насыщено колористическими и техническими эффектами, которые повествовали о глубине замыслов скрипичных транскрипций художника-новатора XIX века Никколо Паганини, вошедшего в мировую музыкальную культуру как первооткрыватель широких возможностей инструмента.

На концерте особенно ярко и свежо прозвучало дважды исполненное Николаем Мадояном произведение Паганини *MOLTO PERPETUO op. 11*, приводя слушательскую аудиторию в полный восторг.

Примечательно также, что творческое содружество Николая Мадояна с дирижером Кареном Дургаряном и оркестром театра оперы и балета превратилось в этот незабываемый вечер в паганиниану нового времени, представляющую вехи нашей национальной культуры.

НАНА МАРГАРЯН
музыковед

Николай Мадоян в ракурсе музыкальных событий нового времени

Недавно в Доме камерной музыки им. Комитаса в Ереване состоялся концерт известного скрипача, заслуженного артиста РА, рекордсмена Книги рекордов Гиннесса Николая Мадояна с Национальным камерным оркестром Армении под управлением приглашенного немецкого дирижера Филиппа Амелунга.

На вечере, прошедшем с большим успехом, Мадоян представил публике Концерт для скрипки и струнного оркестра ре-минор Феликса Мендельсона (1822).

В одухотворенной игре Мадояна прослеживалась мягкость тембра его инструмента, проникновенность, пленительная нежность и, в то же время, напористость его артистичной натуры.

— Уважаемый маэстро, обычно принято играть ласкающий слух знаменитый концерт Мендельсона для скрипки с оркестром ми-минор. Как возникла идея воспроизведения концерта ре-минор композитора?

— Вы правы. Например, Концерт для скрипки с оркестром ми-минор я играл во всех уголках мира с такими выдающимися дирижерами, как Курт Мазур, Клаудио Аббадо и Дмитрий Китаенко. А вот концерт Мендельсона ре-минор сыграл впервые. Должен признаться, что выучил его всего лишь за полмесяца, что осуществилось благодаря директору камерного оркестра Феликсу Бабурияну, который пригласил меня как солиста, чтобы я исполнил это произведение. Вообще Мендельсона я считаю очень солнечным композитором. И еще надо представить, что Мендельсон написал этот концерт в тринадцать лет. Концерт, который по цели не уступает лучшим образцам мировой классики, и можно сказать, превосходит по виртуозности концерт ми-минор.

— Меня также удивил тот факт, что на Вашем концерте присутствовало очень много детей, которые с большим вниманием слушали академическую музыку. А как Вы сами отреагировали на подобное явление?

— Обычно при составлении своих концертных программ, я также всегда стремлюсь к образовательным целям для детей и взрослых. Кстати говоря, совершенно недавно, при содействии министерства ОНКС РА у меня в Абовяне была встреча с воспитанниками различных школ, где я рассказы-



Николай Мадоян и Национальный камерный оркестр Армении под руководством Филиппа Амелунга

вал о скрипичном искусстве и сыграл несколько Венгерских танцев Брамса, а также «Крунк» Комитаса. Я думаю, что встреча с младшим поколением — это тоже неотъемлемая часть моей концертной деятельности.

— Недавний Ваш концерт, прошедший под эгидой *NIKOLAY & NICCOLO* в Национальном театре оперы и балета им. Спендиарова с дирижером, заслуженным артистом РА Кареном Дургаряном и оперным симфоническим оркестром также произвел фурор в концертной жизни нашей столицы. Чем Вам импонирует сам Паганини?

— Паганини — это неразрешимый образ своей эпохи, который имеет огромное эмоциональное воздействие на публику. И не случайно, что как раз эта программа, которую мы сделали с Кареном Дургаряном, была посвящена 240-летию Паганини, где впервые прозвучали переложения разных оперных арий близкого друга Паганини, композитора Дж. Россини, а также И. Вейгеля. Мы пытались таким образом через итальянское *bel canto* сквозь призму веков воссоздать несравненный образ великого Паганини.

— Вы выступаете в самых престижных залах мира. Каков Ваш опыт общения с музыкантами и слушателями других национальностей на мировой сцене?

— Музыка — это, пожалуй, единственный язык, который объединяет, и где нет противоречий между людьми. Не зря некоторые гениальные композиторы считали, что совер-

шенный звук есть только в инструментальной музыке.

Точно так же рассуждаю и я. Уникальность инструментального звука, в частности, колебания тона скрипки абсолютна. И, так как музыкант, артист, сам по себе как бы является посредником между сценой и Высшим Я, то он, на мой взгляд, всегда находится на нейтральной зоне. Так и я. Где бы я ни был, всегда пытаюсь общаться с людьми на этом непредвзятом, общедоступном языке.

— Там, где кончается дипломатия, там начинается война. Как Вы истолковываете понятия мир и мироздание?

— Когда мы говорим о мироздании, то имеем в виду ту незыблемость, те столпы, которые нам оставили древние цивилизации, тех людей, которые повлияли на ход истории, гениев мировой культуры, которые создали музыку, возвышающую человека в гармонии и духовности. Мир — это меняющаяся субстанция. А возвышенность — это мир, мировоззрение, стимул жизни и это то, к чему должен стремиться каждый из нас. Высшее предназначение человека в этом мире в любви и в творчестве.

— Ваши пожелания нашему армянскому народу в эти трудные дни.

— Наша история начинается еще с незапамятных времен. Прямо здесь, у нас в Армении крепость Эребуни—Ереван, которая на несколько лет старше Рима, напоминает нам каждый день зов наших предков. Наши таги и шараканы, которые я тоже часто играю, восходят к Нарекаци и Маштоцу. Казалось бы, этим все сказано. Мы имеем свои национальные черты, пришедшие к нам испокон веков. Но, по моему, мы, армяне, не должны замыкаться в себе и должны все время обновляться, идти дальше, к новым вершинам, к большим победам. Вот, во второй декаде ноября у меня было гастрольное турне по Германии с тем же дирижером Филиппом Амелунгом, а затем — снова концерт в Ереване с новыми замыслами и премьерами. И я надеюсь, что всегда и повсюду буду с достоинством представлять нашу национальную культуру в ракурсе музыкальных событий нового времени.

НАНА МАРГАРЯН
музыковед

Անահիտ Կիրակոսյանի «Հայ ժողովրդական նվագարաններ» շեռնարկը

6 մշակութային լայնածավալ, բազմաբովանդակ, բազմաճյուղ երևույթներից է, որը հեղինակը դարձրեց ժողովրդական սուղ շրջանակներում ներկայացնում է հակիրճ, բայց և մասնագիտական բարձր հմտությամբ՝ հնարավորինս հանգամանորեն և ամբողջացված:

Հատկապես նշելի է ծեռնարկի ջերմ, անբռնազբոս «մթնոլորտը», որն ի հայտ է գալիս շարադրանքի արդեն իսկ սկզբից՝ «Սիրելի փոքրիկ բարեկամ, այս գրքույկը քեզ համար է» հեղինակային ուղերձով: Հեղինակն, ասես, մտերմիկ զրուցում է պատանի ընթերցողի հետ, ուղղորդելով նրան

դեպի հայկական նվագարանների, և դրանով իսկ՝ ազգային նվագարանային երաժշտության այնքան հետաքրքիր և գրավիչ աշխարհը: Նշելի է, որ ծեռնարկը հետաքրքիր և ուսանելի կարող է լինել նաև մեծահասակների համար:

Զեռնարկը աչքի է ընկնում տպագրական բարձր արվեստով, որը «Գեղարվեստ» հանրապետական և միջազգային մրցանակաբաշխությունների մրցանակակիր, հրատարակչական ոլորտում վաղուց արդեն հայտնի, հեղինակավոր «Ամրոց գրուպ» ՍՊԸ-ի բազմաթիվ գործունեության գլխավոր հատկանիշներից է (տնօրեն Կարինա Խաչատրյան):

Անահիտ Կիրակոսյանի «Հայ ժողովրդական նվագա-

րաններ» ծեռնարկը երաժշտագիտական և, մասնավորապես, նվագարանագիտական եռանդուն, արգասավոր գործունեության ևս մեկ նվաճումն է, որ դիտարկելի է ոչ միայն դարձրեց ժողովրդական շրջանակներում, այլև, ընդհանուր առմամբ հայ նվագարանագիտության մեծածավալ ասպարեզում նույնպես: Հարկ է նշել, որ Ա. Կիրակոսյանը ներկայումս կազմում է հայ նվագարանագիտության մեզանում առաջին, և այժմեական կարևոր նշանակության, և խիստ անհրաժեշտ մատենագիտությունը:

ԱՆԱՀԻՏ ԲԱՂԱՍԱՏՅԱՆ
արվեստագիտության բեկմածու, ԵՊՀ դոցենտ

Երգիչ-խմբավար Գեորգ Հաճեանի անվան կրթամրցանակակիրները

Նոյեմբերի 30-ին պաշտոնապես ամփոփվեց Արցախյան 44-օրյա պատերազմի հերոս, երգիչ-խմբավար Գեորգ Հաճեանի հիշատակին նվիրված «Ոսկե սերմեր» երկրորդ մրցույթը:

«Ոսկե սերմեր»-ը «Հայ Չմեռ պապ» բարեգործական հիմնադրամի ծրագիրն է, որը մեկնարկեց 2021 թվականին և նպատակ ունի Արցախյան գոյամարտերում զոհված հերոսների հիշատակը հավերժացնել՝ նրանց անունները շաղկապելով կրթության և մշակույթի զարգացման գաղափարին: Ծրագիրն սիրով միացավ նաև Գեորգ Հաճեանի ընտանիքը, որը ստանձնեց նաև հովանավորի առաքելությունը: Այսպիսով, յուրաքանչյուր կիսամյակ կոն-

սերվատորիայի Ակադեմիական երգեցողության ամբիոնի վճարովի համակարգում սովորող շնորհաշատ ուսանողները խրախուսվում են կրթամրցանակով:

Միջոցառման ընթացքում ԵՊԿ ակադեմիական երգեցողության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գայանե Գեղամյանը շնորհակալություն հայտնեց «Գեորգ Հաճեան» (ի դեմս նրա այրու՝ Ֆրիդա Հաճեանի) և «Հայ Չմեռ պապ» լրագրողական բարեգործական հիմնադրամներին (տնօրեն՝ Արմինե Պետրոսյան) վճարովի համակարգում սովորող ուսանողներին այս կերպ աջակցելու համար:

«Մրցանակակիրների համար սա պատվաբեր օգնություն է, քանի որ հիշատակում է Գեորգ Հաճեանի նման հզոր

անձնավորությանը: Բարի, ազնիվ անձնավորություն, հրաշալի երգիչ. ահա այսպիսին էր Գեորգ Հաճեանը, որի նվիրվածությունը հայրենիքին, հողին, ջրին, ամեն մի թուփին իր արվեստի մեջ շատ բացահայտ երևում է», - ասած պրոֆեսոր Գայանե Գեղամյանը: Եվ հավելեց, որ Գեորգ Հաճեանն իր բոլոր ելույթներում, հատկապես Հայաստանից դուրս համերգներում միշտ կատարել է հայ երգ:

«Հայ Չմեռ պապ» բարեգործական հիմնադրամի տնօրեն Արմինե Պետրոսյանն իր խոսքում ասաց, որ մեծագույն բավականություն են ստացել Կոնսերվատորիայի շնորհալի երիտասարդների կատարումներից:

Կրթամրցանակին արժանացած ուսանողներն են՝

Լուիզա Պետրոսյան

(պրոֆ. Ռեբեկա Օջախյանի դասարան)

Դավիթ խաչատրյան

(պրոֆ. Լիաննա Վարդանյանի դասարան)

Թովմաս Կարապետյան

(դոց. Արմինե Բազինյանի դասարան)

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
երաժշտագետ



Թաթուլ Հաճեան, Դավիթ խաչատրյան, Ֆրիդա Հաճեան



Թաթուլ Հաճեան, Լուիզա Պետրոսյան, Ֆրիդա Հաճեան



Թաթուլ Հաճեան, Թովմաս Կարապետյան, Ֆրիդա Հաճեան

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Бершадская Т.С. Избранные статьи. Учебное пособие. 1—е изд., новое, 2022.

Татьяна Сергеевна Бершадская — выдающийся советский и российский музыковед, профессор Санкт-Петербургской государственной консерватории имени Н. А. Римского-Корсакова, доктор искусствоведения, заслуженный деятель искусств России, обладатель Ордена Дружбы за многолетнюю плодотворную деятельность в области культуры и искусства. В сборник вошли статьи разных лет по проблемам теории музыки, лада и гармонии.

Пособие рекомендовано музыковедам, студентам, преподавателям высших и средних учебных заведений и широкому кругу читателей, интересующихся историей отечественной музыкальной культуры.

Бейли Дерек (перевод М. Степченко). Импровизация: ея природа и практика в музыке. Учебное пособие. 1—е изд., новое., 2022.

Перед вами дополненная и расширенная версия книги Дерек Бейли (1930–2005), которая впервые была опубликована в 1980 году. В дополненное издание вошли новые интервью и фотографии. Труд Бейли по праву можно считать первой книгой, посвященной вопросам импровизации во всех ее формах: индийская музыка, фламенко, барокко, органная музыка, рок, джаз, современная и “свободная” музыка. В ходе разговоров с выдающимися импровизаторами, среди которых Джон Зорн, Джерри Гарсия, Стив Хау, Лайонел Солтер, Эрл Браун, Пако Пенья, Макс Роуч, Эван Паркер и Ронни Скотт, Бэйли рисует перед читателем достоверную картину широчайших возможностей импровизации,

подчеркивая ее основополагающую важность для любого музыкального творчества.

За свою жизнь гитарист Дерек Бейли объездил с концертами полмира, успел поработать со многими импровизирующими музыкантами и записать более девяноста альбомов.

Герцман Евгений Владимирович., Становление истории музыки как науки. Монография. 2—е изд., стер. 2021.

В европейском музыкознании на протяжении нескольких последних столетий принято воззрение, согласно которому история музыки как наука, возникла только во второй половине XVIII в. Анализ исторических свидетельств показывает, что такая точка зрения появилась в результате вполне определенной причины: соответствующие исторические документы древних цивилизаций оценивались по новейшим критериям. Это — антинаучный метод, поскольку при таком подходе можно признать, что древний мир не знал ни арифметики, ни геометрии, ни астрономии, ни других подобных научных дисциплин.

Целью настоящей монографии является доказательство того, что первое европейское подлинное научное историческое исследование было создано приблизительно на рубеже Античности и Средневековья. Но оценивать его нужно по критериям науки Античности. В книге приводятся на языке подлинника и в переводе не только данный трактат, но и многочисленные другие источники, имеющие непосредственное отношение к данной проблематике.

Монография адресована историкам музыки, а также всем интересующимся античной музыкальной культурой.

Тина Гвинерия., Фортепианная музыка для левой руки. История. Теория. Исполнительство. Учебное пособие. 2—е изд., стер. 2021 Рецензенты: Урванцева О.А., доктор искусствоведения, профессор МАГК;

Цатурян К.А., кандидат педагогических наук, профессор МПГУ, пианист, продюсер.

Книга Тины Гвинерия относится к той категории работ, которые раскрывают “белые пятна” истории фортепианного искусства. Впервые с естественно-научных и музыковедческих позиций делается попытка приоткрыть некоторые секреты музыки, исполняемой одной левой рукой. Издание предназначено для музыкантов-исполнителей, учеников, преподавателей фортепианного класса музыкальных вузов, училищ и школ, а также всех интересующихся вопросами музыкального искусства.

Ферруччо Бузони, Эскиз новой эстетики музыкального искусства. Учебное пособие. 3—е изд., стер. 2021.

Трактат итальянского композитора, пианиста и педагога Ферруччо Бузони (1866–1924) посвящен вопросам обновления музыкального искусства на рубеже веков. По мнению Бузони, главное свойство музыки — ее самостоятельность относительно других видов искусства, в связи с чем он отказывает в праве существования программной музыки.

Автор ратует за освобождение музыкального искусства от оков классической гармонии, за привнесение новых способов звукоизвлечения (в том числе, с применением электричества) и возвращение к традиции импровизационного музицирования.

Издание адресовано студентам музыкальных училищ и консерваторий, а также широкому кругу интересующихся искусством.

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆՈՍՏԻՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՌԶ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԱՅՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.

ՀԱՄԱՆԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ, ԳՈՐԴՈՐ ՇԱԳՈՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ Սարգսյան Կիրակոսյան

Թողարկման պատասխանատու՝ ԳՈՐԴՈՐ ՇԱԳՈՅԱՆ

Խմբագիրներ՝ ԱՆՈՒԷ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (հայ. լեզու),

ՍՈՖԱ ԱՆՆԱՌԻՅԱՆ (ռուս. լեզու)

Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՐԴՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 8 էջ: Ստորագրված է 25.12.2022: Գինը 200 դրամ: Տպագրանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ԶԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը անթուղթական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմյանց հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper
Yerevan-State-Conservatory-996490150508214/

